Կազմված է թաղումների և գերեզմանատեղերի գրանցամատյանը և վարվում է:

15.Պահպանված չէ
հուղարկավորությունների հետ կապված մատուցվող վճարովի և անվճար ծառայությունների ցանկի հաստատումը (ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում հավելված N 1, կետ 12, 13):

Հուղարկավորությունները կազմակերպվում են հանգուցյալի հարազատների կողմից և միջոցներով՝ կամավորության սկզբունքով, անհատույց, տարիների ընթացքում ձևավորված ավանդույթի համաձայն:

16.Պահպանված չէ
ՀՀ-ում հուղարկավորելու մասին անվճար տեղեկանքի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 26-ի N1910-Ն որոշում հավելված N1, կետ 22):

Հուղարկավորությունը կազմակերպած անձի պահանջով նրան անմիջապես տրամադրվում է սահմանված կարգի անվճար տեղեկանք:

17.Պահպանված չէ
նոր և գործող գերեզմանատների ընդլայնման համար հողատարածքների տրամադրումը քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական կանոններին (ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում հավելված N 41, կետ 9) հավելված N 4 կետ 6,8):

Նոր գերեզմանատան համար հողատարածք չի տրամադրվել, իսկ գործող գերեզմանատունը պարապապատ է:

18.Պահպանվածչէ
յուրաքանչյուր գործող գերեզմանատան հողերի օգտագործման հատակագծերի մշակումը և հաստատումը (ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում հավելված N 4, կետ 10):

Գերեզմանատունը ձևավորվել է 1830-ական թվականներին, հատկացված տարածքները բաժանվել է բաժնեմասերի ազգությունների միջև, այնուհետև դառնալով ընտանեկան գերեզմաններ, որտեղ կատարվում են հուղարկավորությունները և քանի որ Վարդենիսի քաղաքային գերեզմանատունը մասնակի փակ գերեզմանատուն է՝ ուստի նոր գերեզմանատեղերի համար տարածքներ չկան:

19.Պահպանվածչէ
գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրում և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանում ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում հավելված N4, կետ 15, 16):